«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1217-16.12.2025-ՏՏԳԾ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (այսուհետ՝ Նախագիծ) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում է հետևյալը.

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ավագանու *անդամի հրաժարականի մասին դիմումն ստանալուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում*, կազմում է ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին արձանագրություն:»:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ գործնականում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ ներկայացված հրաժարականի դիմումն ստանալուց հետո համայնքի ղեկավարը (կամ պաշտոնակատարը) անմիջապես (*եռօրյա ժամկետը չլրացած*) արձանագրության հետ միասին այն ներկայացնի ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, իսկ վերջինս անմիջապես կազմի լիազորությունների դադարեցման մասին արձանագրություն, ինչն ավագանու անդամին կզրկի եռօրյա ժամկետում իր դիմումը հետ վերցնելու Նախագծով նախատեսվող իրավունքից:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3.1-ին մասով համանման կարգավորում է նախատեսված համայնքի ղեկավարի համար, մասնավորապես՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում համայնքի ղեկավարը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում կարող է հետ վերցնել: ***Համայնքի ղեկավարի կողմից հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում աշխատակազմի քարտուղարի կողմից համայնքի ղեկավարի հրաժարականի մասին պատշաճ ձևով ծանուցվելուց հետո համայնքի ավագանին եռօրյա ժամկետում կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն:*** Արձանագրություն չկազմվելու դեպքում համայնքի ղեկավարի լիազորություններն օրենքի ուժով համարվում են վաղաժամկետ դադարեցված: Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրությունը չկազմվելու մասին հաղորդումը աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է մարզպետարան»:

Հաշվի առնելով սույն կարգավորումը՝ առաջարկում ենք Նախագծով նախատեսվող դրույթը դիտարկել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3.1-ին մասի համատեքստում, մասնավորապես՝ *առաջարկում ենք աշխատակազմի քարտուղարի կողմից լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրությունը կազմել ավագանու անդամի կողմից իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում:*

Հարկ ենք համարում նշել նաև, որ լրացուցիչ հստակեցման և պարզաբանման կարիք ունի այն հանգամանքը, թե Նախագծով անտեսված իրավակարգավորումն ինչու՞ չի դիտարկվել մեծամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամների հրաժարականի դեպքում:

Նախագծով նախատեսված համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամի հրաժարականի վերաբերյալ առաջարկությունը վերաբերում է նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին: